ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-5418/25
28 հոկտեմբեր 2025թ.

«Մ. Ս. Շ. ԱՆԴՐԳՐԱՈՒՆԴ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ ՄԵՍՐՈՊ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Շահինյան

ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի /այսուհետ՝ Պատվիրատու/ և «Մ.Ս.Շ ԱՆԴՐԳՐԱՈՒՆԴ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Կապալառու/ միջև 2022թ օգոստոսի 25-ին կնքվել է «ԼՄՕՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/6» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի շրջանակում Կապալառուն ստանձնել է «Օձուն համայնքի բնակավայրերի փողոցների նորոգում՝ սալարկմամբ» աշխատանքների կատարման պարտավորությունը: Որի շրջանակներում իրականացված աշխատանքների արդյունքում ի հայտ եկած անհամապատասխանությունները և թերությունները պայմանագրի 3.1.3 կետին համապատասխան Ձեզ տրամադրված ողջամիտ ժամկետում Ձեր կողմից չեն վերացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «ԼՄՕՀ-ՀԲՄԱՇՁԲ-22/6» ծածկագրով գնման պայմանագրի 3.1.4 կետի գ և դ ենթակետերը և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների

գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները թերի կատարելու հիմքով ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանը/որպես իրավահաջորդ/ հայտնում է,որ սույն թվականի հոկտեմբերի 29-ից սկսում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով գործընթացը:

Միաժամանակ հայտնում ենք, որ Կապալառուին տրվում է 5 աշխատանքային օր պայմանագրի ապահովումը՝ 5081284 /հինգ միլիոն ութանասունմեկ հազար երկու հարյուր ութանասունչորս/ դրամի և որակավորման ապահովումը՝ 15243853/տասնհինգ միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար ութ հարյուր հիսուներեք/ դրամի չափով վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Պտվիրատուի բանկային հաշվին՝ 900265121104:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Մ.Ս.Շ.ԱՆԴՐԳՐԱՈՒՆԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Քառյան